

ՆԵՈԼԻԹ-ԷՆԵՈԼԻԹՅԱՆ ՀՈՂԱՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ռ. Մ. ԹՈՐՈՍՅԱՆ

Հայկական լեռնաշխարհը Առաջավոր Ասիայի լայնարձակ տարածքի այն հատվածներից է, որ շնորհիվ իր բարենպաստ բնակլիմայական պայմանների, շատ հնուց բնակեցված է եղել նստակյաց երկրագործական-անասնապահական ցեղերով:

Հայաստանի վաղ երկրագործների արտադրության, մշակույթի ու կենցաղի հուշարձաններն այսօր բավական մեծ քանակով հայտնաբերվում են նախալեռնային ու լեռնային հովիտներում, գետահունների ու հեղեղատների ափերին:

Նյութական մշակույթի ու կենցաղային առարկաների հետզհետե հարուստացող հավաքածուները նոր հնարավորություններ են ստեղծում նախնադարյան կյանքի պատմական զարգացման օրինաչափությունները վեր հանելու, մշակույթի բնորոշ առանձնահատկությունները ճանաչելու, ինչպես նաև ընդհանուր տնտեսական զարգացման մակարդակի չափանիշներ հանդիսացող արտադրության գործիքների ու մշակույթի նմուշները դասակարգելու և թվագրելու գործում:

Հայկական լեռնաշխարհի վաղ երկրագործական-անասնապահական ցեղերի ու տոհմերի տնտեսության ամենատարբեր ճյուղերի ուսումնասիրության համար հատկապես մեծ կարևորություն ունեն Արարատյան դաշտի բնակատեղիների նյութերը, որոնք, լեռնաշխարհի տերիտորիալ մեկ հատվածի վրա մարդկանց արտադրական գործունեության արդյունքներ լինելով, միաժամանակ տիպականանում են ողջ լեռնաշխարհի համար, դառնալով նրա զարգացման ընդհանուր մակարդակն արտահայտող կոմպլեքսներ: Այդ նյութերի հետազոտության շնորհիվ հնարավոր է նախնական պատկերացում կազմել Արարատյան դաշտում մշակված հացահատիկի կուլտուրական տեսակների, ինչպես նաև հողամշակման հնագույն գործիքների ու նրանց օգտագործման եղանակների մասին:

Հայկական լեռնաշխարհը հարուստ է վայրի հացաբույսերով¹ և այստեղ, ծովի մակերևույթից 1200—1500 մետր բարձրության վրա, նախալեռնային շրջաններում, այսօր էլ կարելի է հանդիպել վայրի ցորենի տեսակների², սակայն Արարատյան դաշտում թե՛ հնագիտական, թե՛ հնաբուսաբանական ուսումնասիրությունների ընթացքում վայրի հացահատիկի որևէ տեսակ չի հանդիպել: Դրա դիմաց մշակովի հացահատիկների գոյությունը վստահեցնում է բնակատեղիների վաղ շերտերում շինարարության համար օգտագործված կավացիսի, կամ աղյուսների մեջ հարդի առատ գոյությամբ:

¹ Н. И. Вавилов, Центры происхождения культурных растений, Л., 1926, էջ 135—136:

² М. Г. Туманян, Ботанический состав диких пшениц Армении и условия их произрастания в природе, «Труды по прикладной ботанике, генетике и селекции», серия У, № 2, Л., 1934, էջ 241—260:

Սա ցույց է տալիս, որ Արարատյան դաշտում առայժմ հայտնի հնագույն երկրագործական բնակատեղիներում արդեն իրականացվում էր կուլտուրական, հացահատիկի մշակումը, իսկ նրա ընտելացման պրոցեսը, հավանաբար, կատարվել էր ավելի վաղ, հնագիտական նյութերով դեռևս չփաստարկվող շերտերում:

Արարատյան դաշտում նստակյաց վաղ երկրագործական տնտեսության գոյության մասին են վկայում նաև հնավայրերի պեղումների միջոցով հայտնաբերված աշխատանքային գործիքները՝ քարե ու ոսկրե բրիչներ, մանգաղներ, աղորիքներ, սանդեր և երկրագործական տնտեսության մեջ օգտագործված այլևայլ առարկաներ:

Ներկա հողվածում անհրաժեշտ ենք համարում քննության առնել Արարատյան դաշտի բնակատեղիներում մեր կողմից հավաքված գործիքների առավել հետաքրքիր և քիչ հետազոտված խմբերից մեկը, որը կարող է համարել մ. թ. ա. V հազարամյակի երկրորդ կեսի հողամշակութային մասին եղած տվյալները:

Արարատյան դաշտում վաղ երկրագործական մշակույթի հնավայրերից հայտնաբերված հողամշակութային գործիքները ըստ իրենց ձևերի կարելի է բաժանել մի քանի խմբի.

ա) եղջյուրից պատրաստված քլունգանման բրիչ.

բ) փայտե բռնակով քարե և ոսկրե բրիչներ.

գ) փայտե փորիչի ծանրոց կախիչներ.

Այդ խմբում, առաջին հերթին, հետաքրքիր են քարե և ոսկրե բրիչները, որոնք իրենց առաջացմամբ և էվոլյուցիայով պայմանավորված են տվյալ կուլտուր-պատմական շրջանի տեղաբնիկների հասարակական, տնտեսական զարգացման մակարդակով և այն բնակլիմայական շրջապատով, ուր գործել են արտադրող կուլեկտիվները:

Ապացուցված է, որ փափուկ, ջրաբերուկային հողեր ունեցող վայրերում հողամշակութային հետ կապված գործիքների զարգացումը ընթացել է փայտե փորիչ, փայտե բրիչ և վերջապես բահ ճանապարհով (Եգիպտոս, Հարավային Միջագետք, Զինաստան), իսկ Առաջավոր Ասիայի լեռնային ու նախալեռնային քարքարոտ հողատարածությունների վրա հողամշակութային գործիքների էվոլյուցիան ընթացել է քարե և ոսկրե հարվածող գործիքների զարգացման ուղիով: Հայկական լեռնաշխարհի վաղ երկրագործական տնտեսության աշխատանքային գործիքների նմուշները դիտարկելիս, ակնհայտ կերպով երևում է, որ այստեղ, ինչպես լեռնաշխարհը շրջապատող այլ մշակութային շրջաններում, սկզբնավորվել ու զարգացում են ապրել հողամշակութային հարվածող գործիքները:

Քանի որ Արարատյան դաշտում երկրագործական կյանքի հնագույն ժամանակաշրջաններին պատկանող հողամշակութային գործիքները դեռևս չատրիչ են հայտնի, ուստի և անհրաժեշտություն է առաջանում ներկա հավաքածուի բոլոր նմուշները ներկայացնել հնարավորին չափ մանրամասնորեն:

Մեր ունեցած բրիչներից հնագույնը պատրաստված է եղջերուի եղջյուրից: Այն հայտնաբերվել է էջմիածնի շրջանի Վ. Խաթունարխ գյուղի մոտ գտնվող բլուր-բնակատեղիի 1,6—1,7 մետր խորություն ունեցող շերտում, որը քննթագրվում է օբսիդիանի դանականման շեղբերից պատրաստված միկրո և մակրո գործիքների տեսակներով, այսպես կոչված, «մատիտանման»

միջուկների ու ոսկրե դուրերի առկայությամբ: Խեցեղեն նմուշները նշված շերտում շատ սակավ են: Հայտնաբերված է ավազախառն կավից պատրաստված դարչնագույն ամանի ընդամենը մեկ բեկոր: Ներտի ժամանակագրման համար անհրաժեշտ ենք համարում նկատել, որ հնավայրի 1,2—1,4 մետր խորությունից հայտնաբերվել է հյուսիս-միջագետքյան գունազարդ խեցու նմուշ և «տրապեցիա» կոչվող միկրոլիթյան գործիք: Սրանց հիման վրա շերտը վերագրվում է ուշ նեոլիթյան և լաղ կենոլիթյան ժամանակաշրջաններին:

Այս բրիչը քլունգանման է (է. գ. թ., № 2804)³, ունի 38 սմ երկարություն, 5 սմ տրամագիծ: Պատրաստված է ալնիվ եղջերուի եղջյուրից⁴, որի վրա եղել են եռեք ձյուղեր: Ամենայն հավանականությամբ մեր ունեցածը բրիչի բռնակն է: Նրա ծայրը խնամքով կտրված է ու հղկված, որպեսզի այն հարմար լինի աշխատեցնելու: Բռնակի վրա եղած եղջյուրի ելուստը սուր գործիքի օգնությամբ կտրված, հեռացված է, իսկ տեղը հղկված: Եղջյուրի հիմնային մասում կան երկու այլ ձյուղերի հետքեր, որոնցից մեկը վերը նկարագրվածի նման կտրվել է, իսկ մյուսը, հավանաբար, աշխատանքի ժամանակ է կոտրվել: Այս կոտրված ձյուղի հիմնական մասում պահպանված հատվածը, չնայած իր փոքր չափին, հնարավորություն է տալիս վերականգնելու նրա ուղղությունը: Օգտվելով այս հնարավորությունից կարող ենք ասել, որ աշխատող ելուստը բռնակի հետ կազմել է մոտավորապես 70—75 աստիճանի անկյուն: Բործիքի բռնակի մակերեսը հիմնականում անմշակ է, սակայն նրա կենտրոնում և ծայրամասում նկատվում են ձեռքի մեջ աշխատեցնելու հետևանքով առաջացած հղկման հետքեր (փայլ): Գործիքն ունեցել է մեկ աշխատող ելուստ, որը բռնակի հետ միասին ծնկաձև մարմնի տեսք է տվել նրան:

Եղջյուրից պատրաստված աշխատանքային գործիքներ հայտնաբերվել են նաև Հայկական լեռնաշխարհի վաղ երկրագործական մշակույթի այլ հնավայրերում՝ Կախիջեանի Քյուլ-Թափայի 1-ին շերտում, որտեղ եղջյուրը ունի միջանցիկ անցք⁵, Շամիրամալթիում (Վանի ավազանի⁶, որտեղ եղջյուրը հանդես է գալիս որպես բռնակ, Շուլավերում (Վրացական ՍՍՀ)⁷ և այլուր:

Փառե բռնիչներ: Սրանք ներկայացված են երեք օրինակով, որոնք հայտնաբերվել են Վ. Նաթունարի բլուր-բնակատեղիի վերին շերտում, 0—1 մետր խորությունից: Թե՛ նախորդը (1,2—1,4 մ), թե՛ այս շերտը պատկանում են մոտավորապես միևնույն ժամանակաշրջանին և մշակութային դարգացման մեծ տարբերություններ չեն դրսևորում: Բրիչները պատրաստված են գետաքարերից, որոնց մակերեսները հստակ ջրի մեջ երկար մնալու հետևանքով խիստ հղկված են: Բրիչների համար ընտրված գետաքարերը, նայած անհրաժեշտության, ճեղքվել են մասերի և ապա ենթարկվել հասարակ բեկոտման: Եթե քարը հաստ չի եղել և համապատասխանել է պատրաստվող գործիքի չափերին, ապա այդ դեպքում բեկոտման միջոցով ձևավորվել են նրա կոթը և աշխատող մասերը: Բեկոտումը իրականացվել է տափակ գետաքարի կող-

³ Է. գ. թ.՝ էջմիածնի դադառադիտական թանգարան:

⁴ Կենդանու տեսակը որոշել է հնակենդանաբան Ս. Մեմուրյանը:

⁵ Օ. Ա. Աбубаев, Некоторые итоги изучения холма Кюль-Тепе в Азербайджане. СА, 1963, № 3, էջ 161:

⁶ Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կոլտուրան, հատ. 1, Երևան, 1931, եկ. 37, № 1:

⁷ К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние культуры южного Кавказа. Л., 1970, № 30, № 8—20:

քերին մեկ այլ քարով թեր հարվածներ հասցնելու և ոչ մեծ պոկվածքներ հանելու եղանակով: Ընդ որում, հարվածները հասցվել են քարի կողքերին՝ լրբեմն մեկ, երբեմն էլ երկու հրեսներից, որպեսզի քարը բարակի և ստանա անհրաժեշտ տեսք: Մեր օրինակների վրա, որպես կանոն, մակերեսների որոշ հատվածներում կամ ամբողջ մակերեսին պահպանված է քարի բնական վիճակը, իսկ բեկոտումը առկա է քարի կողային շրջագծի երկայնքով: Բրիչների երկարությունը 14—17 սմ է, աշխատող՝ թիականման մասի լայնությունը՝ 5—7 սմ, իրանի հաստությունը՝ 2,5 սմ: Աշխատող ծայրը սովորաբար սուր է:

Քարե բրիչներից № 2747 (է. գ. թ.) պատրաստված է կանաչավուն գետաքարից, ունի ողորկ բնական մակերես: Երկարությունը 15,5 սմ է, լայնությունը՝ 6,2 սմ, կոթի լայնությունը, որը ծայրի մասում պակասում է, 4,6 սմ է. իրանի հաստությունը՝ 2,2 սմ, քաշը՝ 280 գրամ: Աշխատող սայրը թեք, կոտրելու միջոցով սրված է: Մակերեսի վրա երևում են հաղիվ նշմարելի մանր գծեր, որոնք, ինչպես ցույց են տալիս մանրադնին դիտարկումները, օգտագործման արդյունք են: Թվում է, որ այս բրիչը պոչիկի սրված մասով մտել է փայտե բռնակի ծնկաձև ելուստի վրա արված հատուկ փոսիկի կամ ձեղքի մեջ և ապա կապվելով, կամ ինչ-որ նյութով ամրացվելով, օգտագործվել է:

Մյուս նմուշը (է. գ. թ., № 2748) ևս տափակ գետաքար է, որի երկարությունը 14 սմ է, աշխատող թիականման մասի լայնությունը՝ 3 սմ, հաստությունը՝ 2,5 սմ, քաշը՝ 360 գրամ: Ինչպես նախորդ նմուշը, այնպես էլ սա մշակված են միևնույն եղանակով: Այս գործիքի աշխատող ծայրը շատ բարակ է, որը արդյունք է խնամքով բեկոտելու և լրացուցիչ մշակելու: Այս մասին են վկայում աշխատող ծայրի վրա, բեկոտված մակերեսի կողմում առկա մանր պոկվածքների հետքերը: Ի տարբերություն նախորդ նմուշի, սրա աշխատող ծայրի ուրվագիծը կոր է, իսկ պոչիկը ոչ թե բարակող է, այլ հաստացող: Թիականման բերանի և պոչի միջև եղած մասում իրանը նեղանում է և ապա ծայրի մասում լայնանում: Թվում է, այդպես է արված այն նպատակով, որ պոչի հաստացող հատվածով բրիչը հենվի բռնակի համապատասխան մասին, իսկ իրանը թելով կամ կաշվե բարակ ժապավենով կապվի բրիչի փայտե բռնակի ելուստին: Բրիչի ոչ ցլեկված մակերեսին, որը քիչ ուռուցիկ է, առկա են բազմաթիվ մանր գծեր, որոնք օգտագործման հետևանք են: Դատելով այդ ուղղահայաց գծերի երկարությունից կարող ենք ասել, որ փորելու ժամանակ բրիչը հողի մեջ խորացել է 5—6 սմ:

Բացի վերը նկարագրված բրիչներից, հավաքածուի մեջ կա նաև մեկ այլ նմուշ (է. գ. թ., № 2749), որի պատրաստման ժամանակ օգտագործվել է այլ հնարանք: Այս քարը մինչև բեկոտելը նախ երկարությամբ ձեղքվել է երկու մասի: Դիմային տեսքը ձվածիր է: Մեծ տրամագիծը, կամ գործիքի երկարությունը 17 սմ է, փոքր տրամագիծը՝ 6,7 սմ, պոչը՝ 5,3 սմ, իրանի հաստությունը ամենահաստ տեղում՝ 2,6 սմ, քաշը՝ 500 գրամ: Աշխատող սայրը և պոչը սուր են և բարակող: Եթե նախորդ նմուշների աշխատող սայրերը ձևավորված են միակողմանի բեկոտման եղանակով, ապա այս վերջինը՝ երկկողմանի: Ընդգրկված մակերեսը հարթ է, իսկ հակառակ կողմում պահպանված է քարի բնական վիճակը: Բրիչների ներկա հավաքածուի նմուշների համար բնորոշ է նրանց աշխատող մասի ոչ լայն ձևը, որն, անշուշտ, թելադրվել է քարքարոտ և ամուր հողերի մեջ նրանց օգտագործման անհրաժեշտությամբ: Պետք է նկատել, որ այս առանձնահատկությամբ էլ Արարատյան դաշտի

բրիչները բրոշ չափով տարբերվում են առաջավորասիական հնավայրերի հայտնի նմուշներից: Եթե Թելլ-Հասսունայից, Սիալկ I-ից, Ջաֆարաբադից հայտնաբերվածների աշխատող սայրերը կոր են և լայն, Արարատյան դաշտինը՝ սրացող: Քարե բրիչներ օգտագործվել են ծնկաձև փայտե բռնակի հետ ամրացվելու միջոցով: Ըստ որում, քարե փայտե բռնակին ամրացվել է երկու եղանակով:

ա) Քարը դրվել է բրիչի բռնակի ծնկաձև ելուստի մեջ և ապա կապվել կամ ինչ-որ նյութով ամրացվել:

բ) Քարը կապվել է փայտի հետ, որը իր վերին մասով հենվել է բռնակին:

Բրիչների այս ձևերի վերականգնման համար հիմք են ծառայում ոչ միայն պեղումների ընձեռած նյութերն ու նրանց վրա եղած հետքերը, այլև ազգագրական բազմաթիվ նյութերը, որոնք վերաբերվում են Ասիայի, Աֆրիկայի ժողովուրդների XV III—XIX դարերի կենցաղին⁸:

Մեր ունեցած նմուշներն իրենց վրա կրում են ինտենսիվ օգտագործման հետքեր, որոնք գրանցվում են մակերեսների վրա մանր գծերի առկայությամբ և աշխատող սայրերի խիստ ողորկ փայլուն վիճակով:

Նմանատիպ բրիչները շատ մեծ տարածում են ունեցել Առաջավոր Ասիայի: Անդրկովկասի, Արևմտյան Կովկասի, Իրանական սարահարթի, ինչպես նաև Միջին Ասիայի (հարավ-արևմտյան Թուրքմենիա, Անաու—I) վաղ երկրագործական մշակույթի տարածման սահմաններում: Դրանցից հայտնաբերվել են Հյուսիսային Միջագետքի Հասսունա⁹, Հարավային Միջագետքի Ջեմդետ Նասր¹⁰, Իրանական սարահարթի Թեփե Սիալկ—I¹¹, Սուղ I հնավայրերում¹², ինչպես նաև Միջին Ասիայի Չակմակլի-դեպե բնակավայրում¹³:

Ուշագրավ է նաև այն, որ նմանատիպ գործիքներ հայտնաբերված են նաև Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջաններում¹⁴, ինչպես նաև Կովկասի արևմտյան՝ ժովափնյա մասերում, Սոչի—Ադլեր քաղաքների շրջակայքում¹⁵:

Գիտության մեջ հողամշակութային ամենահին հարվածող տիպի գործիքը համարվում է քարե բրիչը, որով ոչ միայն փխրեցրել են հողը, այլև փորել:

Ապացուցված է, որ նմանատիպ գործիքները ծառայել են որպես բրիչ-քահեր, որոնց միջոցով փորված հողի մեջ ակոսներ են բացել ջրելու համար: Այս փաստը լավագույն ապացույց է ոչ միայն արհեստական ոռոգման իրա-

⁸ Յու. Լիպսի, Իրերի ծագումը, Երևան, 1957, էջ 123—125:

⁹ Lloyd, F. Saffar, Tell Hassuna, Journal of Near Eastern Studies, v. IV, № 4, Chicago, 1945, № 4. 19—20.

¹⁰ E. Mackey, Report on Excavations at Jemdet Nasr, „Iraq“, I, 1931, տախ. LXXV, 10:

¹¹ R. Ghirshman, Fouilles de Siak près de Kashan, I, Paris, 1938, տախ. LVII. 9:

¹² J. de Morgan, La Préhistoire Orientale, III, Paris, 1927, № 89, 103—104:

¹³ О. Бердыев, Чакмаклы-депе—новый памятник времени Анау I А, «История, археология и этнография Средней Азии», М., 1958, էջ 19; Г. Ф. Каробкова, Орудия труда и хозяйство неолитических племен Средней Азии, МИА, № 158, էջ 46:


¹⁴ Ս. Չիլիկցարյան, Նեոլիթի նորահայտ հուշարձաններ Նոյեմբրյանի շրջանում, «Գաղտնա-բանասիրական հանդես», 1970, № 3, էջ 294—297:

¹⁵ Л. Н. Соловьев, Новый памятник культурных связей Кавказского причерноморья—стоянки Воронцовской пещеры, «Труды Абхазского ИЯЛИ», № XXIX, Сухуми, 1958, էջ 148, № 16; В. В. Бжания, Мачарское поселение эпохи энеолита и бронзы в Абхазии, СА, 1966, № 1, էջ 115:

կանացման, այլև հավաստում է երկրագործության բնագավառում ձեռք բերված մի այլ հաջողություն. ակոսների բացելը հնարավորություն էր տալիս նախօրոք մշակված հողի մեջ հատիկներ ցանել հավասար հեռավորության վրա, որի շնորհիվ նպաստավոր պայմաններ են ստեղծվում բույսերի ինտենսիվ աճի ու բարձր բերքատվության համար:

Այսպիսով տեսնում ենք, որ բրիչները ունեցել են բազմազան բնույթ՝ օգտագործվելով թե՛ ոռոգման, թե՛ ցանքսի ժամանակ:

Բացի քարե բրիչներից, Արարատյան դաշտի հնավայրերից հայտնաբերվել են նաև ոսկրից պատրաստված բրիչներ, որոնք Հայկական լեռնաշխարհում գտնված վաղ երկրագործական մշակույթի այլ հուշարձանների նման պատրաստված են խոշոր կենդանիների ոսկորներից:



Նկ. 1. Քարե բրիչներ

Գործիքների այս տեսակի մեջ խիստ ուշագրավ է Թեղուտի բնակատեղիից հայտնաբերվածը (է. գ. թ., № 885): Այն պատրաստվել է խոշոր կենդանու սրունքոսկրից: Նրա մի ծայրում պահպանված է ծայրաձանը, իսկ հակառակ կողմը կոտրված է: Մայրաձանից ներքև, ոսկրի իրանի վրա կան և՛ բերք փոքրիկ միջանցիկ անցքեր, որոնք հավանաբար պետք է ծառայեին բրիչի ոսկրե մասը փայտե կոթառին ամրացնելուն: Հետաքրքիր է, որ գործիքի մարման ժամանակ անցքերի միջից թափվում էին օբսիդիանի մանր բեկորներ, որոնք պոկվել էին քարե շաղափից: Գործիքի երկարությունը 10 սմ է: Մայրաձանի լայնությունը՝ 7 սմ, իսկ խողովակաձև մասի տրամագիծը՝ 4 սմ: Այս գործիքը ամենայն հավանականությամբ թերի է:

Նմանատիպ գործիքներ հայտնաբերված են Անդրկովկասի համաժամանակյա այլ բնակավայրերից, որոնք մեր նմուշի հետ համեմատելիս շատ օրիշ տարբերություններ են դրսևորում: Շումու թեփի¹⁶ (Ադրբեջանական

¹⁶ Н. Г. Нариманов, Г. С. Исмаилов, Акстафачайское поселение близ г. Казах, СА, 1962, № 4, էջ 150, նկ. 1:

ՆՍՀ), Շուշալերի¹⁷ (Վրացական ՍՍՀ) բրիչները նույնպես պատրաստված են կենդանու սրբանքոսկրից, սակայն նրանք իրենց կենտրոնում ունեն միջանցիկ անցքեր: Շամիրամալթիինը թիակոսկր է, որը նույնպես ունի կենտրոնական անցք¹⁸:

Ինչպես տեսնում ենք, Անդրկովկասում և Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. IV հազարամյակում տարածում է ստանում միջանցիկ անցքով բրիչը, որը, Տ. Ս. Պասսեկի ճիշտ դիտողության համաձայն, հարմար է հողը փխրեցնելու և այլ ևրկրագործական աշխատանքներ կատարելու համար¹⁹:

Բացի բրիչների այս տեսակներից, հնագիտական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են խողովականման ոսկորների շեղբերից ու թիակ-ոսկրներից պատրաստված գործիքներ, որոնք օգտագործվել են հողամշակույթի մեջ և այլ բնագավառներում: Այս խմբում ուշագրավ է Վ. Խաթունարիսի բլուր-բնակատեղիի 1,2 մ խորության շերտի հորից հայտնաբերված նմուշը: Մա 30 սմ երկարությամբ թիակոսկր է, որի թիականման աշխատող մասի լայնությունը 5 սմ է, իսկ երկարությունը՝ 8 սմ, ծայրը սրացող է: Բրիչի շուրջ 20 սմ երկարության բռնակը ավարտվում է ծայրաճանով: Գործիքի աշխատող մասի երկու մակերեսների վրա ակնհայտ կերպով երևում են աշխատանքի հետևանքով առաջացած մանր գծեր, որոնք աշխատող սայրի նկատմամբ ունեն ուղղահայաց դիրք: Բռնակը ձևերի մեջ աշխատեցնելու հետևանքով խիստ հղկված է և փայլում է (է. գ. թ., № 2743):

Մնամիչ ոսկրի աշխատած շեղբ է նաև է. գ. թ. № 887-ը, որի ծայրաճանը կոտրված է: Սա ունի 18 սմ երկարություն: Նման գործիքներ հայտնաբերվել են Անդրկովկասի, Հայկական լեռնաշխարհի ու հարևան մշակութային շրջանների նեոլիթ-էնեոլիթյան ժամանակաշրջանների շերտերից: Դրանք հայտնի են Նախիջևանի Քյուլ թափա 1-ին²⁰, Շուշալերի²¹, Պարսկական սարահարթի Պիջիլի թևի²² բնակատեղիներից:

Այս գործիքների բաղմակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սրանցով կարելի էր հողի կոշտերը փխրեցնել, հողի մեջ փոսեր փորել հատիկներ ցանելու համար, հողի միջից արմտիքներ հանել և այլ աշխատանքներ կատարել:

Հողամշակութային գործիքների շարքը մեր հավաքածուում համալրվում է ծանրոց-կախիչներով, որոնք հայտնաբերվել են Վ. Խաթունարիսի, Մադկունքի (Մըխլ-թափա) և Թեղուտի հնավայրերից: Նրանք պատրաստված են ծակուտկեն գետաքարից, ունեն օղակաձև կամ ձվածիր տեսք և կենտրոնական միջանցիկ անցք: Այսպիսի առարկաներ հայտնաբերվել են ինչպես ավարտուն, այնպես էլ թերի վիճակում: Առավել բնորոշ նմուշ է Թեղուտի բնակատեղիներից գտնվածը (է. գ. թ., № 1690). իրանը շրջանաձև է (14 սմ տրամագծով), կենտրոնում փորված է միջանցիկ անցք (4 սմ տրամագծով), հաս-

¹⁷ К. Х. Кушнарева, Т. Н. Чубиннишвили, *Եղվ. աշխ.*, էջ 30, նկ. 8, № 20:

¹⁸ Ե. Սամվելյան, *Եղվ. աշխ.*, նկ. 37, № 1:

¹⁹ Т. С. Пассек, Первые земледельцы, сб. «По следам древних культур», М., 1951, էջ 56:


²⁰ О. А. Абибулаев, *Եղվ. աշխ.*, էջ 161:

²¹ К. Х. Кушнарева, Т. Н. Чубиннишвили, *Եղվ. աշխ.*, նկ. 8, № 13, 14:

²² R. H. Dyson, T. G. Joung, The solduz Walley. Iran: Pisdell-Tepe, «Antiquity», 1960, № 133, ներդիր III:

սուրձյունը 5 սմ է: Միջանցիկ անցքի պատերի վրա նկատվում են հղկման հետքեր, իսկ մյուս մասերում քարը շատ անհարթ է:

Նման գործիքների հայտնի են թե՛ Հայկական լեռնաշխարհի, և թե՛ Առաջավոր Ասիայի բազմաթիվ վաղ բնակավայրերից: Սրանց նշանակության մասին ուսումնասիրողները տարբեր կարծիքներ են հայտնել: Նրանք կենտրոնական անցքով այս քարերը դիտել են որպես իլիկի գլուխներ, ձկնորսական ցանցի կախիչներ, ջուլհակի դազգահի ծանրոցներ և այլն:



Նկ. 2. Ոսկրե գործիքներ

Այս տեսակետների մեջ հատկապես ուշագրավ է Ջ. Բրայդվուդին, որը ելնելով իր իսկ հայտնաբերած օրինակների վրա եղած փայտի մնացորդներից, գտնում է, որ դրանք փայտե փորիչի ծանրոցներ են, որոնցով լրացուցիչ հզորություն է տրվել փայտե գործիքին²³:

Ծանրոց-կախիչների առկայությունը Արարատյան դաշտի հնավայրերում ցույց է տալիս, որ Հայաստանում, հողամշակութային վերը ներկայացված գործիքների հետ միասին, գոյություն են ունեցել նաև փայտե փորիչներ: Վերջիններս, ըստ երևույթին, օգտագործվել են նախկինում մշակված և մաքրված փափուկ հողերում:

Տվյալ մշակութային շրջանում նման գործիքների հանդես գալը, Ի. Լ. Խլոպինի բնութագրմամբ, վկայում է այդ տերիտորիայում հողի կանոնավոր մշակման, ինչպես նաև երկրագործության պարզունակ՝ լիմանային ձևից ոռոգվող երկրագործության անցնելու մասին²⁴:

Այսպիսով տեսնում ենք, որ Արարատյան դաշտի հնավայրերից հայտնաբերված երկրագործական աշխատանքի հնագույն գործիքները (քարե և ոսկրե րրիչներ, ծանրոց-կախիչներ) առաջավորասիական իրենց նմանակներ


²³ R. J. Braidwood, L. S. Braidwood, Jarmo. A village of early farmers in Iraq, „Antiquity“, 1950, № 96, էջ 193:

²⁴ И. Н. Хлопин, Геокурская группа поселений эпохи энеолита. Опыт исторического анализа. М.—Л., 1969, էջ 98—99:

բի պես, կապված են ոչ թե երկրագործության ամենախանական ձևերի (ասենք՝ լիմանային ճանաչված ձևի), այլ արհեստական ոռոգման վրա հիմնը-ված կանոնավոր արտադրող երկրագործական տնտեսության հետ։

Հետաքրքիր է նաև այս գործիքները պարունակող հնագիտական կոմպլեքսների Թվագրության հարցը, որի կարևորությունը թելադրվում է Արարատյան դաշտի ուշ նեոլիթյան և վաղ էնեոլիթյան տնտեսության թվագրման անհրաժեշտությամբ։

Ինչպես նշվեց վերևում, քարից և եղջյուրից պատրաստված բրիչները հայտնաբերվել են մշակութային այնպիսի շերտերում, որոնց համար բնորոշ են վաղ երկրագործական տնտեսության ուշ նեոլիթյան և վաղ էնեոլիթյան փուլերի մշակութային առանձնահատկություններ։ Դրանք ավելի ակնառու են դառնում, երբ համադրում ենք Առաջավոր Ասիայի, Կովկասի ու մշակութային այլ շրջանների վաղ երկրագործական տնտեսության հաջորդական զարգացման ընթացքը դրսևորող շերտերի հետ։



Նկ. 3. Մանրոց-կախիչներ

Արարատյան դաշտի վաղ երկրագործական մշակույթի ժամանակաշրջանի քարե գործիքների փոփոխությունները լավագույն ձևով արտացոլում են Կ. Խաթունարխի, Ծաղկունքի բնակատեղիների տարբեր շերտերը։

Վ. Խաթունարխի բնակատեղիում միկրոլիթյան գործիքներ են գտնվել՝ սկսած Եփորին շերտերից մինչև վերինը։ Այս ընթացքի մեջ ակնհայտ կերպով ներկում է միկրոլիթների քանակական նվազումը։ Օրինակ, բնակատեղիի հետախուզական խրամատի 2-1,6 մ շերտում հայտնաբերված միկրոլիթյան գործիքների հավաքածուն բաղկացած է դանականման շեղբերից, բերիչներից, ծակիչներից, տարբեր ձևի միջուկներից սլոկված եռանկյունաձև մանր հանվածքներից, «տրապեցիաներից» և այլնից։ Մինչև մեկ մետր խորությունը այս գործիքները աստիճանաբար սլակասելով վերանում են, և 1,2 մ շերտում իր գոյությունը պահպանում է միայն «տրապեցիան»։ Այս շերտից վեր հանդես են գալիս ցլեկման նղանակով պատրաստված ավելի մեծ գործիքներ, ինչպես նաև քարե բրիչներ։

Մոտավորապես նման պատկեր է ներկայացնում նաև Ծաղկունքի բնա-

կատարվելու Այստեղ միկրոլիթյան գործիքներ պարունակող վերին շերտը (2,5—3 մ) ընկած է Վ. Խաթունարիսի բնակատեղիի վեհին և Թեղուտի հնավայրին բնորոշ խեցեղեն ու քարե գործիքների պարունակող շերտերից ցած։ Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, բուն Թեղուտում և նրան զուգահեռ հնավայրերում միկրոլիթյան գործիքները սովորաբար բացակայում են։ Հետաքրքիր է, որ քարե բրիչների առկայության նույնպիսի օրինաչափություն է նկատվում նաև Կովկասի արևմտյան ծովափնյա շրջաններում։ Քարե բրիչները գտնվել են միկրոլիթյան գործիքներ պարունակող շերտերից վերև²⁵։

Մշակույթի զարգացման նույնպիսի պատկեր ենք տեսնում նաև Կիլիկիայի Յումուկ-թեփե հնավայրում։ Այստեղ միկրոլիթյան սեղանաձև գործիքները առավել մեծ քանակով առկա են 24-րդ շերտում, իսկ հետագայում աստիճանաբար պակասում են և վերջին անգամ հանդես են գալիս 19-րդ շերտում։

Ինչպես հայտնի է, Յումուկ-թեփեի 24-րդ շերտը նանաշված է որպես պրոտոխալկոլիթյան և համադրված է Հասսունայի վաղ մշակույթի հետ։ 23—20-րդ շերտերը վաղ էնեոլիթյան են և նորից համադրված Հասսունայի ու Նինվեի հետ։ 19-րդ շերտը միջին էնեոլիթյան է, ուղեկցվում է հալաֆյան խեցեղենով²⁶։

Հարկ է նկատել, որ Արարատյան դաշտում ևս (Վ. Խաթունարիս, 1,2 մ շերտ և Թեղուտի բնակավայր) հայտնաբերված են հյուսիս-միջագետքյան հալաֆյան ճանաչված դունազարդ խեցու նմուշներ։ Վ. Խաթունարիսի բնակատեղիում հալաֆյան նմուշներն ուղեկցում են բրիչներ պարունակող շերտերին։ Ինչպես հայտնի է, Հյուսիսային Միջագետքի հալաֆյան մշակույթը ուսումնասիրող գիտնականների կողմից (փոքր բացառություններով) թվագրված է մ. թ. ա. V հազարամյակով։ Այսպես, Գ. Չայլդը այն թվագրում է մ. թ. ա. V հազարամյակի առաջին կեսով²⁷, Ա. Ա. Իեսսենը՝ մ. թ. ա. V հազարամյակի երկրորդ և IV հազարամյակի առաջին կեսերով²⁸, Վ. Մ. Մասսոնը՝ V հազարամյակի վերջով և IV հազարամյակի սկզբով²⁹ և այլն։ Հայկական լեռնաշխարհում հալաֆյան մշակույթի տարածման ժամանակագրության համար կարևոր փաստեր են նաև Նախիջևանի Քյուվ-թափայի 1-ին շերտի 78,8 մ խորության մեջ հայտնաբերված հալաֆյան խեցու բեկորը և նույն հորիզոնի համար ստացված ռադիո-ածխածնային անալիզի տվյալները։ Շերտը թվագրված է 5770 թ. ± 90 տարի, այսինքն՝ 3820 թ. մ. թ. ա.³⁰։

Հալաֆյան մշակույթի նմուշների առկայությունը, ինչպես նաև միկրոլիթյան գործիքների զարգացման ընթացքի օրինաչափությունները, հնարավոր

25 А. А. Формозов, Неолит и энеолит Северо-западного Кавказа в свете последних исследований, СА, 1964, № 3, էջ 12։

26 J. Garstang, Prehistorie Mersin. Chicago, 1953, էջ 2։

27 Г. Чайлд, Древнейший Восток в свете новых раскопок, М., 1956, էջ 228։

28 А. А. Иессен, Кавказ и Древний Восток в IV—III тыс. д. н. э., КСИА, М. вып. 93, էջ 13։

29 В. М. Массон, Средняя Азия и древний Восток, էջ 464։

30 А. А. Иессен, Из исторического прошлого Милеско-Карабахской степи, МИА СССР, № 125, էջ 12։ Հալաֆյան մշակույթի թվագրման հարցերին անդրադարձել են նաև արևմուտքի հնագետներ Զ. Մելլատտը՝ „Earliest Civilizations of Near East, գրքում և Ռ. Վ. Էրիկսը „Chronologies in old world archaeology“ գրքում։ Նրանք մշակույթը թվագրում են մ. թ. ա. V հազարամյակով։

են դարձնում Արարատյան դաշտի հնավայրերի քարե բրիչներ պարունակող շիրտերը թվագրել մ. թ. ա. V հազարամյակի երկրորդ կեսով: Մի փոքր ավելի ուշ կոմպլեքսների հետ են հանդես գալիս ոսկրից պատրաստված նույնպես հարվածող տիպի բրիչները, որոնց ուղեկցող մշակույթը Հայկական լեռնաշխարհում և նրան հարակից շրջաններում թվագրվում է մ. թ. ա. IV հազարամյակի առաջին կեսով:

Այսպիսով, Արարատյան դաշտում և Հայկական լեռնաշխարհում հողամշակման բրիչային եղանակի դոյությունը առայժմ հայտնի նյութերի հիման վրա կարելի է նախնականորեն դիտել մ. թ. ա. V հազարամյակի 2-րդ կեսից սկսած: Անշուշտ, հետագա ուսումնասիրությունները նոր նյութերի հայտկերեն, որոնք կլուսեն Հայաստանի վաղ երկրագործական մշակույթի սկզբնավորման ու զարգացման բաց մնացած էջերը: Դրանք առավել պարզորոշ ապացույցներ կտան Հայկական լեռնաշխարհում մարդկային հասարակության նախնադարյան զարգացման ամենախոշոր առաջընթացի՝ հավաքական-որսորդական տնտեսաձևից նստակյաց երկրագործական արտադրող տնտեսության անցնելու մանրամասների վերաբերյալ: